ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Ք. Երևան, 16 սեպտեմբերի 2019 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (խորհուրդ) էլեկտրոնային քվեարկության ներկայացված հարցերի վերաբերյալ

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցել են՝

Ա. Թորոսյան – ՀՀ առողջապահության նախարար (խորհրդի նիստը վարող)
Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (խորհրդի անդամ)
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)
Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)
Բ. Պիպոյան – «Իրազեկ և պաշտպանված սպառող» ՀԿ ղեկավար (խորհրդի անդամ)
Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (խորհրդի անդամ)
Ն. Սարգսյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ կառավարման խորհրդի անդամ (խորհրդի անդամ)

ՍԱՏՄ կառավարման խորհրդի 2019 թվականի օգոստոսի 28-ին կայացած նիստի N7, N9, N10, N11 որոշումների համաձայն՝ էլեկտրոնային քվեարկության են ներկայացվել օրակարգային 4 հարցերի վերաբերյալ նյութերի լրամշակված տարբերակները:

1. ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2019 թվականի չորրորդ եռամսյակում իրականացվելիք ստուգումների ծրագրին հավանություն տալու մասին

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 5 կողմ և 1 դեմ ձայներով որոշվեց՝

1) Հավանություն տալ 2019 թվականի չորրորդ եռամսյակում իրականացվելիք ստուգումների ծրագրի նախագծին:
2) Հանձնարարել ՍԱՏՄ ղեկավար Գ. Ավետիսյանին՝ սահմանված կարգով հաստատել և հրապարակել պաշտոնական կայքում:

2. 2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից կատարված հիմնական աշխատանքների արդյունքների հաշվետվություն

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 6 կողմ ձայներով որոշվեց՝

1) *Հաստատել 2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ԿԵ ՍԱՏՄ կողմից կատարված հիմնական աշխատանքների արդյունքների հաշվետվությունը:*

3. 2018 թվականի ընթացքում ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 6 կողմ ձայներով որոշվեց՝

1) *Հաստատել 2018թվականի ընթացքում ՀՀ ԿԵ ՍԱՏՄ կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:*
2) *Հանձնարարել ՍԱՏՄ ղեկավար Գ. Ավետիսյանին՝ հաշվետվությունը հրապարակել պաշտոնական կայքում՝ «Լրամշակված տարբերակ» նշումով:*

4. «Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշման նախագիծ

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 6 կողմ ձայներով որոշվեց՝

1) *Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգը:*

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 16.09.2019 18:07:25 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ